ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԻՑՅԱՆ ԳՈՀԱՐ ԲԵՐԿԱՅԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՑԱԾՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պ/կ **Արուսյակ Վաչագանի Հովհաննիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լաուրա Թոռնիկի Ասատրյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աննա Լևոնի Մինասյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ մայիսի 14 - ին՝. ժամը – 12:00-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն » 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի ապրիլի 13-ին:

«Մանկավարժություն » 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու,դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Տարիներ շարունակ ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականի հիմնախնդիրը եղել և մնում է կարևոր մանկավարժագիտական հիմնահարց որն այսօր հրատապ լուծման կարիք ունի, սույն հարցն իրապես գտնվում է գիտնականների ու պրակտիկ մանկավարժների ուշադրության կենտրոնում: Նշված հիմնախնդրին անդրադարձել են Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Ա.Բուդարնին, Մ.Ա. Դանիլովը, Ա.Մ.Հելմոնտը, Վ.Պ.Եսիպովը, Լ.Վ.Զանկովը, Վ.Վ.Դավիդովը, Կ.Վ. Բարդինը, Պ.Պ.Բլոնսկին, Լ.Ի.Բոժովիչը, Ի.Պ.Պոդլասին, Վ.Ի.Զիկովան, Պ.Պ.Բորիսովը, Ն.Ի. Մուրաչովսկին, Լ.Ս.Սլավինան, Ա.Ա.Սմիրնովը, Վ.Ս. Ցետլինը, Մ.Ս. Պևզները և այլք: Սույն հիմնահարցերի համակողմանի և խորը ուսումնասիրությունն ու վերլուծությունը կնպաստի տարրական դպրոցում մանկավարժական գործընթացի արդյունավետությանը, հաշվի կառնվեն գնահատման նոր համակարգի մոտեցումները և դրանց հիման վրա կմշակվեն ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականին՝ մանկավարժական աջակցության ուղիներ:

Հանրակրթության պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ 2023 թվականից փոխվել է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման կարգը,ըստ որի գնահատման սանդղակում յուրաքանչյուր նիշ, նույնիսկ նվազագույնը, համարվում է սովորողների ուսումնական ձեռքբերում, ուստի հանրակրթության համար 1 խնդիր է դառնում ապահովել և ամրագրել սովորողի ուսումնական ձեռքբերումներն ու վերջնարդյունքները,որի համաձայն ժամանակի հրամայականն է, որ սովորողը մշտապես մոտիվացված լինի և բարելավի իր ուսումնական առաջադիմությունը:

Այդ համատեքստում ի հայտ է գալիս կրտսեր դպրոցականի ուսումնական առաջադիմության դրական շարժընթացի ապահովման մանկավարժական աջակցության ուղիների առաջադրման անհրաժեշտությունը:

Անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել և վերլուծել սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգը, բացահայտել կրտսեր դպրոցականի կրթական կարիքները, վերլուծել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու մանկավարժահոգեբանական պատճառները և այդ համատեքստում առաջադրել մանկավարժական աջակցության ուղիներ:

Հետազոտության օբյեկտը: Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականի առաջադիմության գործընթացն է և դրա վրա ազդող գործոնները :

Հետազոտության առարկան: Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականի ուսման առաջադիմության բարձրացման ուղիներն են:

Հետազոտության նպատակը: Կրտսեր դպրոցականի ուսումնառության ցածր արդյունքների արձանագրման մանկավարժահոգեբանական պատճառների բացահայտումն ու այդ գործընթացի դրական շարժընթացի ապահովման մանկավարժական աջակցության ուղիների առաջադրումն է:

Հետազոտության գիտական վարկածը:

Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականի հիմնախնդիրը կհաղթահարվի, եթե՝

1. մեկնաբանվի «ուսումնական դժվարություն» հասկացությունը սովորողների ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու մանկավարժահոգեբանական պատճառների ուսումնասիրման համատեքստում,
2. ուսումնասիրվեն կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար դրական մոտիվացիա ձևավորելու նպատակով, 3. դասակարգվեն կրտսեր դպրոցականների խմբերը՝ ըստ ուսումնառության ցածր արդյունքների և ուսումնական դժվարությունների:
4. բացահայտվեն ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառները, ուսումնական դժվարությունները, բացահայտվի մշակված կրթական ռեսուրսների ներդրման արդյունքների արդյունավետությունը,
5. մշակվեն ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների ուսումնական առաջադիմության դրական շարժընթացի մանկավարժական աջակցության ուղիներ:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունները՝ ուսման նկատմամբ դրական մոտիվացիա ձևավորելու նպատակով:
2. Սահմանել ***<u>ուսումնական դժվարություն</u>*** հասկացությունը :
3. Ներկայացնել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր ***<u>դպրոցականների յուրաքանչյուր խմբի նկարագիրը</u>*** (ըստ ուսումնառության ցածր արդյունքների և ուսումնական դժվարությունների):
4. Իրականացնել հետազոտություն՝ ***<u>ուսումնառության ցածր արդյունքների պատճառները, ուսումնական դժվարությունները, կրթական ռեսուրսների</u>*** ներդրման արդյունքները պարզելու նպատակով:
5. Առաջադրել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների ուսումնական առաջադիմության դրական շարժընթացի ***<u>մանկավարժական աջակցության ուղիներ</u>***:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության նպատակով, առաջ քաշված խնդիրներով և գիտական վարկածով պայմանավորված՝ կիրառվել են հետևյալ մեթոդները.

- **տեսական՝** ատենախոսության հիմնախնդրին առնչվող պատմագիտական, հոգեբանամանկավարժական, մեթոդական և մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- **էմպիրիկ՝** դիտում, զրույց, աշակերտական փաստաթղթերի ուսումնասիրություն, հարցաթերթիկային հարցում,

- **վիճակագրական մեթոդներ՝** հետազոտության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների տրամագրային և աղյուսակային պատկերում,
- Ն.Գ.Լուսկանովայի, Ն.Պ.Կապուստինի և Վ.Գ.Շչուրի դիագնոստիկ մեթոդիկաներ:

Հետազոտության հիմնական փուլերը: Հետազոտությունը կատարվել է երեք փուլով.:

*1.**նախապատրաստական (2020-2022 թթ.)*** փուլում ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականությունը, որոշվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ճշգրտվել են հետազոտության հիմնական ուղղությունները, առաջադրվել են օբյեկտը, առարկան,նպատակը, ձևակերպվել են հետազոտության վարկածը և խնդիրները, մշակվել է հետազոտության մեթոդիկան:

2-րդ փուլում (2022-2024թթ.) մշակվել և տեսականորեն համակարգվել են կրտսեր դպրոցականի՝ ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու հիմնախնդրի ուսումնասիրման ուղիները, իրականացվել են **հետազոտական** աշխատանքներ**:**

3-րդ փուլում (2025 թ.) վերլուծվել և ընդհանրացվել են հետազոտության արդյունքները, ստուգվել են առաջադրված դրույթները, ձևակերպվել են եզրակացությունները:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Ուսումնասիրվել և վերլուծվել են կրտսեր դպրոցականի ուսումնառության ***ցածր արդյունքների պատճառները***՝ ուսումնառության արդյունքների գնահատման նոր համակարգի ներդրման պայմաններում:
2. Մշակվել և կիրառվել են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականին տրամադրվող ***մանկավարժական աջակցության ուղիներ. (***դպրոց-ընտանիք համագործակցություն, երկարօրյա ուսուցում, տարբերակված ուսուցում, կրթական ռեսուրսների ներդրում և մշտադիտարկում):
3. ***Մշակվել են կրթական ռեսուրսներ՝ էլեկտրոնային «Խոսող գրքեր» և «Տարամակարդակ առաջադրանքներով, հանձնարարություններով, թեմատիկ նյութերով աշխատանքային տետրեր»:***
4. Սահմանվել է ***«ուսումնական դժվարություն»*** հասկացությունը. այն է՝ ***«Աշակերտի կարողունակությունների ձևավորման մակարդակի անհամապատասխանություն առարկայական չափորոշչային պահանջներին»:***

Հետազոտության տեսական նշանակությունը: Տեսականորեն հիմնավորվել է առաջարկվող մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը՝ կրտսեր դպրոցականի առաջադիմության բարձրացման ուղղությամբ: Վերլուծվել և հիմնավորվել են հետազոտական աշխատանքների արդյունքները: Հավաքագրվել և մշակվել են հիմնախնդրին վերաբերվող գիտատեսական հիմքերը :

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել կրտսեր դպրոցականի առաջադիմության բարձրացման համար: Առաջադրված գիտահետազոտական նյութերը՝ գնահատման նոր համակարգի պայմաններում, հանդիսանում են պահանջված գործիքակազմ՝ սույն հիմնախնդրով զբաղվող մասնագետների համար: Մեր կողմից մշակված ***մանկավարժական աջակցության ուղիների և կրթական ռեսուրսների*** կիրառման արդյունքները տարրական դպրոցում՝ կարող են նպաստել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականի հիմնախնդրի հաղթահարմանը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

- Կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունների ուսումնասիրությունը նպաստում է տարրական դպրոցում մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
- Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների մանկավարժական աջակցության ուղիների մշակման և կիրառման մակարդակը՝ անմիջականորեն կախված է սովորողների ուսումնական դժվարությունների և ուսումնառության ցածր արդյունքների մանկավարժահոգեբանական պատճառների ուսումնասիրության մակարդակից: Մեր կողմից ***մշակված մանկավարժական աջակցության ուղիները*** միտված են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողների ուսումնառության ***ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը :***
- Ուսուցման և ուսումնառության գործընթացն արդյունավետ կազմակերպելու գործում կարևորագույն և առանցքային նշանակություն ունի ***մանկավարժական աջակցության ուղիների մշակումը*** և ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած ***սովորողների խմբերի դասակարգումը***՝ ըստ ուսումնառության ցածր արդյունքների և ուսումնական դժվարությունների:
- Իրականացված հետազոտության արդյունքում բացահայտված ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների ուսումնական դժվարությունների առաջացման հիմնական պատճառները, ինչպես նաև նրանց համար նախատեսված մանկավարժական աջակցության արդյունավետ ուղիները նպաստում են ***կրթական ռեսուրսների ներդրման դրական ազդեցության ապահովմանը և ուսումնական արդյունքների բարելավմանը:***

Հետազոտության բազան:

Հետազոտությունն իրականացվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հ. 2 , Երևանի «Վարդանանց ասպետներ» հ. 106 հիմնական և Արագածոտնի մարզի Հարթավան գյուղի միջնակարգ դպրոցներում: Ուսումնասիրությունների և կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցումներով հանդես ենք եկել ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի նիստերում ,առցանց քննարկումներում, սեմինարներում, հոդվածներ տպագրել հայկական և օտարերկրյա ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը պարունակում է 12 աղյուսակ, 55 տրամագիր և 10 գծապատկեր: Ատենախոսության հիմնական տեքստը կազմում է 168 էջ, հավելվածով՝ 290 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, գիտական վարկածը, հետազոտության խնդիրները, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը ,պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտական բազան:

Ատենախոսության առաջին՝ «**Կրտսեր դպրոցականի ուսումնառության ցածր արդյունքների բարելավումը որպես մանկավարժական հիմնախնդիր**» խորագիրը կրող գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին՝ «Կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունները ուսումնական առաջադիմության բարձրացման տեսանկյունից» խորագրով ենթագլխում ներկայացվել են կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ներկայացվել են նաև կրտսեր դպրոցականի զարգացման վրա ազդող հիմնական գործոնները, ինչպես նաև անձի զարգացման տարիքային շրջաբաժանումները:

Երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականի ուսումնական դժվարությունների ուսումնասիրությունը և դրանց առաջացման պատճառները» խորագրով ենթագլխում մեկնաբանվել է «ուսումնական դժվարություն» հասկացությունը և բացահայտվել են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառները:

Երրորդ՝ «Միջանձնային հարաբերությունների և կրտսեր դպրոցականների՝ ուսումնական գործընթացին պատրաստվածության փոխկապակցվածությունը» խորագրով ենթագլխում կարևորվել է կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացին պատրաստվածության և միջանձնային հարաբերությունների (աշակերտ-աշակերտ,ուսուցիչ-աշակերտ,...) փոխկապակցվածությունը :

Չորրորդ՝ «Կրտսեր դպրոցականների առաջադիմության և ներընտանեկան հարաբերությունների փոխկապակցվածությունը» խորագրով ենթագլխում բացահայտվել և ներկայացվել է ներընտանեկան հարաբերությունների ազդեցությունը կրտսեր դպրոցականների արժեքների ձևավորման, ուսումնական մոտիվացիայի և առաջադիմության վրա:

Հինգերորդ՝ «Կրտսեր դպրոցականի ուսումնառության արդյունքների գնահատումը» ենթագլխում ներկայացվել են տարբեր ժամանակաշրջաններում ուսումնառության արդյունքների գնահատման ձևերը, տարբեր մանկավարժ-գիտնականների մոտեցումները, ինչպես նաև հանրակրթության պետական նոր չափորոշչի փոփոխությամբ պայմանավորված ուսումնառության արդյունքների գնահատման նոր համակարգը:

Ատենախոսության երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով գլուխը բաղկացած է վեց ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացված է «Դպրոց-ընտանիք համագործակցությունը» որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի:

Երկրորդ ենթագլխում կարևորվել է «**Դպրոց-ընտանիք համագործակցության ազդեցությունը՝ կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի արդյունավետության վրա»:**

Երրորդ ենթագլխում դիտարկվել է «Կրթական ռեսուրսների ներդրումը» որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի:

Չորրորդ ենթագլխում ներկայացվել է «Տարբերակված ուսուցումը» որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի:

Հինգերորդ ենթագլխում «Երկարօրյա ուսուցումը» նույնպես դիտարկվել է որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի:

Եվ վերջին՝ վեցերերդ ենթագլխում ներկայացվել է «Մշտադիտարկումը» որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի:

Երրորդ՝ «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների բացահայտմանն ու աջակցությանն ուղղված հետազոտական աշխատանք» խորագրով գլխում ներկայացվել են իրականացված հետազոտական աշխատանքների ընթացքն ու արդյունքները, որոնք բացահայտում են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության արդյունավետ կազմակերպման ուղիները:

Հետազոտությունն իրականացվել է Երևանի Խ.Աբովյանի անվան հ.2, Երևանի «Վարդանանց ասպետներ» հ. 106 հիմնական և Արագածոտնի մարզի Հարթավան գյուղի միջնակարգ դպրոցներում: Ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել են 473 աշակերտ (452-ը՝ քաղաքից, 21-ը ՝գյուղից) , 38 ուսուցիչ (29-ը՝ քաղաքից 9-ը՝ գյուղից) և 122 ծնող (102-ը՝քաղաքից, 20-ը՝ գյուղից): Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել,

բացահայտվել և վերլուծահամադրաբար ներկայացվել են վերը նշված դպրոցներում՝ կրտսեր դպրոցականների ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառները և առաջադրվել են մանկավարժական աջակցության ուղիներ:

Հետազոտությունն իրականացվել է մի քանի փուլով.

առաջին փուլում իրականացվել է ՝ **աշակերտական փաստաթղթերի** (անձնական գործեր, բժշկական փաստաթղթեր, գրավոր - ստեղծագործական աշխատանքներ) ուսումնասիրություն, **դասալսումներ՝** «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը » առարկաների շրջանակներում՝ վերը նշված դպրոցների 3-րդ և 4-րդ դասարաններում, կիրառվել են Ն.Գ. Լուսկանովայի, Ն.Պ.Կապուստինի և Վ.Գ.Շչուրի **դիագնոստիկ մեթոդիկաները,** իրականացվել են **զրույցներ՝** ծնողների և աշակերտների հետ, **հարցաթերթիկային հարցում՝** ուղղված ուսուցիչներին և ծնողներին, կազմվել և հանձնարարվել են **հայտորոշիչ գրավոր աշխատանքներ** «Մայրենի»,«Մաթեմատիկա»,«Ես և շրջակա աշխարհը» առարկաներից:

Երկրորդ փուլում ,ելնելով մեր ուսումնասիրության առաջին փուլի արդյունքներից, ինչպես նաև ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառների վերաբերյալ ժամանակակից գիտամանկավարժական գրականության մեջ առկա դասակարգումներից, առանձնացվել են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառների 4 խումբ և ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների պայմանական 3 խումբ (գծապատկեր 1.,2.):

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.



Երրորդ փուլում առաջադրվել են մանկավարժական աջակցության ուղիներ (գծապատկեր 3.):

Գծապատկեր 3.



Չորրորդ փուլում՝ առաջադրված մանկավարժական աջակցության ուղիների արդյունավետությունը պարզելու նպատակով դարձյալ իրականացվել են դասալսումներ, հանձնարարվել են գրավոր աշխատանքներ, իրականացվել է հարցաթերթիկային հարցում, զրույցներ և կիրառվել են դիագնոստիկ մեթոդիկաներ:

Վերջին փուլում իրականացվել են հետազոտության արդյունքների հավաքագրում, դասդասում, համակարգում , վերլուծություն, ինչպես նաև արվել են առաջադրված խնդիրներին համապատասխան եզրակացություններ:

Մշտադիտարկման արդյունքում պարզեցինք, որ մեր կողմից կիրառված տարամակարդակ առաջադրանքները, վարժությունները, հանձնարարականները նպաստում են սովորողի՝ ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելուն և հնարավորություն են տալիս յուրացնել նյութը նշված առարկաներից, **ձեռք բերել գիտելիքներ, ձևավորել հմտություններ, ապահովել առարկայական չափորոշիչներում ամրագրված ակնկալվող վերջնարդյունքները:**

Ներկայացվել են կրթական ռեսուրսների արդյունավետության վերաբերյալ վերը նշված դպրոցների ուսուցիչների և ծնողների շրջանում իրականացված հարցախույզի արդյունքները: Հարցախույզին մասնակից ծնողների 34% -ը կարծում է, որ կրթական ռեսուրսները զգալիորեն օգնում են երեխայի դասապատրաստման ընթացքում, 24%-ը՝ գրեթե 50%-ով օգնում են, 22% -ը՝ դանդաղ, բայց օգնում են, 20% -ը՝ զգալիորեն թեթևացնում են նաև ծնողի հոգսը (տրամագիր 1.):

Տրամագիր 1.



Հարցախույզին մասնակից ուսուցիչների 31% -ը կարծում է, որ կրթական ռեսուրսները զգալիորեն նպաստել են սովորողների՝ ուսումնառության ընթացքում առաջացած ուսումնական դժվարությունների հաղթահարմանը , 24%-ը՝ գրեթե 50%-ով նպաստել են, 18%-ը՝ 60%-ով նպաստել են,16%-ը՝ հիմնականում նպաստել են, 8%-ը՝ 80%-ով նպաստել են, 3%՝-ը՝ դանդաղ, բայց նպաստել են (տրամագիր 2.):

Տրամագիր 2.



Ստորև ներկայացված են վերը նշված դպրոցներում մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները :

Երևանի Խ. Աբովյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ընդհանուր առմամբ 193 (3-րդ և 4-րդ դասարաններ) կրտսեր դպրոցականներից ուսումնառության ցածր արդյունքներ են արձանագրել 49-ը: Մեր կողմից առաջադրված մանկավարժական աջակցության ուղիների կիրառման արդյունքում ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած 42 կրտսեր դպրոցականներ բարելավել են իրենց ուսումնառության արդյունքները (տե՛ս տրամագիր 3.):

Տրամագիր 3.



Երևանի «Վարդանանց ասպետներ» հ. 106 հիմնական դպրոցի ընդհանուր առմամբ 259 (3-րդ և 4-րդ դասարաններ) կրտսեր դպրոցականներից ուսումնառության ցածր արդյունքներ են արձանագրել 66-ը: Մեր կողմից առաջադրված մանկավարժական աջակցության ուղիների կիրառման արդյունքում ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած 55 կրտսեր դպրոցականներ բարելավել են իրենց ուսումնառության արդյունքները (տրամագիր 4.):

Տրամագիր 4.



Արագածոտնի մարզի Հարթավան գյուղի միջնակարգ դպրոցի ընդհանուր առմամբ 21 (3-րդ և 4-րդ դասարաններ) կրտսեր դպրոցականներից ուսումնառության ցածր արդյունքներ են արձանագրել 6-ը: Մեր կողմից առաջադրված մանկավարժական աջակցության ուղիների կիրառման արդյունքում ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած 5 կրտսեր դպրոցականներ բարելավել են իրենց ուսումնառության արդյունքները (տրամագիր 5.):

Տրամագիր 5.



Մշտադիտարկման արդյունքում պարզեցինք, որ մեր կողմից կիրառված տարամակարդակ առաջադրանքները, վարժությունները, հանձնարարականները նպաստում են սովորողի՝ ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելուն և հնարավորություն են տալիս յուրացնել նյութը նշված առարկաներից, **ձեռք բերել գիտելիքներ, ձևավորել հմտություններ, ապահովել առարկայական չափորոշիչներում ամրագրված ակնկալվող վերջնարդյունքները:**

Եզրակացություններ

1. Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականի տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումն ու հաշվառումը կարևոր է ուսումնական առաջադիմության բարձրացման տեսանկյունից :
2. «Ուսումնական դժվարություն» հասկացությունը մեկնաբանվել է որպես ***«Աշակերտի կարողունակությունների ձևավորման մակարդակի անհամապատասխանություն առարկայական չափորոշչային պահանջներին»:***
3. Հետազոտության արդյունքում առանձնացվել է ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների պայմանական 3 խումբ:
   I ընդհանուր և կայուն խմբում ընդգրկված էին հիմնական առարկաներից երկարատև ցածր արդյունքներ արձանագրած դպրոցականները:
   II մասնակի խմբում ընդգրկված էին միայն մեկ առարկայից ցածր արդյունքներ արձանագրած սովորողները և **III ժամանակավոր** խմբում այն սովորողները, որոնք ոչ միշտ էին ցածր արդյունքներ արձանագրել :
4. ***Մեր կողմից մշակված կրթական ռեսուրսները՝ էլեկտրոնային «Խոսող գրքերը» և «Տարամակարդակ առաջադրանքներով աշխատանքային տետրերը»՝ «Մայրենի». «Մաթեմատիկա»*** և ***«Ես և շրջակա աշխարհը»*** առարկաներից, հետազոտության բազա հանդիսացած երեք կրթօջախներում ապահովել են արդյունավետություն. բարձրացել է սովորողների ուսումնական մոտիվացիան, ինքնագնահատականը, հաղթահարել են ուսումնառության ընթացքում առաջացած ուսումնական դժվարությունները՝ կապված բազմապատկման աղյուսակի յուրացման, խնդիրներ լուծելու կարողության, թվաբանական գործողությունների կատարման, երկրաչափական պատկերների և մարմինների իմացության հետ:Ինչպես նաև ընթերցանության, ուղղագրական սխալների, վերարտադրելու, ստեղծագործելու կարողության հետ կապված դժվարություններ և այլն:
5. Հետազոտության ընթացքում մշակված մանկավարժական աջակցության ուղիների՝ (« ***դպրոց-ընտանիք համագործակցությունը». «կրթական ռեսուրսների ներդրումը». «տարբերակված ուսուցումը».«երկարօրյա ուսուցումը» և «մշտադիտարկումը»***») կիրառումը մեծապես նպաստեց 3 խմբերում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հետևյալ աշխատանքներում՝

1. Երիցյան Գոհար, «Տարբերակված ուսուցումը որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության

ուղի», Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես » 2026 թ.,համար 1(72), էջ 250-264:
2. Ерицян Г., Взаимосвязь успеваемости учащихся младших классов и внутрисемейных отношений, Педагогический журнал, Том № 6 А, 2020 г., с. 162-165. Московская область, г. Ногинск.
3. Ерицян Г., Азарян Р., Взаимосвязь межличностных отношений и подготовленности к учебному процессу школьников младших классов, Журнал «Современные проблемы науки и образования» 2020. - № 6, дата публикации 22.01. 2021, г. Москва.
4. Ерицян Н., Лалазарян Н., Роль сотрудничества школы и семьи в учебном процессе школьников младших классов, Журнал «Современные проблемы науки и образования», Выпуск №2 2021, г. Москва.
5. Ерицян Г., Оганесян А., Акопян Г., Пути педагогического сопровождения положительной динамики успеваемости младших школьников, «Педагогический научный журнал» 2025. Том 8. № 7, с. 107-115, г. Москва.
6. Ерицян Г., Оганесян А., Сотрудничество школы и семьи – путь педагогической поддержки, Научный журнал «Человек. Социум. Общество» Выпуск S16- 2025, с. 14-21, г. Москва.
7. Yeritsyan G., Hovhannisyan A., Learning difficulties of a primary school student and the reasons why they arise, International Research Journal ▪ № 9 (159),2025,Sverdlovsk region ,city Yekaterinburg.

ЕРИЦЯН ГОАР БЕРКАЕВНА

СПОСОБЫ ПЕДАГОГИЧЕСКОЙ ПОДДЕРЖКИ, ПРЕДОСТАВЛЯЕМОЙ ДЛЯ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ С НИЗКОЙ УСПЕВАЕМОСТЬЮ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 14 мая 2026 года в 12: 00, на заседании специализированного совета «Педагогика» 020 КВОН РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца ,17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. На протяжении многих лет проблема младшего школьника с низкими учебными результатами оставалась и остается важной педагогической проблемой, требующей срочного решения сегодня: эта проблема действительно находится в центре внимания ученых и практических педагогов.

Проблему решали Л.С. Выготский, А. А. Бударный, М. А. Данилив, А.М.Гельмонт, В.П. Есипов, Л.В. Занков, В.В. Давыдов, К.В.Бардин, П.П. Блонский, Л.И. Бойович, И.П. Подласый, В.И.Зыкова, П.П. Борисов, Н.И. Мурачовский, Л.С.Славина, А.А. Смирнов, В.С. Цетлин, М.С. Певзнер и др.

Всестороннее и глубокое изучение и анализ этих вопросов помогут повысить эффективность образовательного процесса в начальной школе, учитывать подходы новой системы оценки и развивать образовательную поддержку для младших школьников с низкими образовательными результатами.

В связи с введением Государственного стандарта образования, начиная с 2023 года, изменилась шкала оценки результатов обучения учащихся: каждая цифра, даже минимальная, рассматривается как образовательное достижение ученика. Такое образование становится возможностью обеспечить и закрепить образовательные достижения и результаты ученика, в соответствии с которомии актуальной задачей является мотивация и улучшение его успеваемости.

В этом контексте необходимо предложить пути педагогической поддержки для обеспечения положительного прогресса в образовании младшей школы.

Необходимо изучить и проанализировать новую методику оценки результатов обучения учащихся выявить образовательные потребности младших школьников, проанализировать педагогические - психологические причины низких результатов обучения и предложить способы педагогической поддержки в этом контексте.

Объект исследования:

Процесс учебной успеваемости младшего школьника с низкими результатами обучения и факторы, влияющие на него.

Предмет исследования:

Пути и методы повышения учебной успеваемости младшего школьника с низкими результатами обучения.

Цель исследования. Выявление психолого-педагогических причин низких результатов обучения младшего школьника и предложение путей педагогической поддержки, обеспечивающих положительную динамику данного процесса.

Задачи исследования.

1. Изучить возрастные и индивидуальные особенности младшего школьника с целью формирования положительной мотивации к обучению.
2. Определить понятие «учебная трудность».
3. Представить характеристику каждой группы младших школьников с низкими результатами обучения (по уровню низких результатов обучения и учебных трудностей).
4. Провести исследование с целью выявления причин низких результатов обучения, учебных трудностей и результатов внедрения образовательных ресурсов.
5. Предложить пути педагогической поддержки положительной динамики учебной успеваемости младших школьников с низкими результатами обучения.

Научная новизна исследования.

1. Изучены и проанализированы причины низких результатов обучения младшего школьника в условиях внедрения новой системы оценки учебных результатов.
2. Разработаны и применены пути педагогической поддержки младшего школьника с низкими результатами обучения (сотрудничество «школа–семья», продленное обучение, дифференцированное обучение, внедрение и мониторинг образовательных ресурсов).
3. Разработаны образовательные ресурсы: электронные «Говорящие книги» и рабочие тетради с разноуровневыми заданиями, упражнениями и тематическими материалами.

Этапы исследования:

1. **Подготовительный этап (2020–2022 гг.)** – изучена литература по психопедагогическая, профессиональная и методическая литература; определены теоретические и методологические основы, уточнены направления исследования, сформулированы объект, предмет и цель, выдвинута гипотеза и определены задачи; разработана методика.
2. **Второй этап (2022–2024 гг.)** – разработаны и систематизированы пути изучения проблемы низких учебных результатов младших школьников; проведены исследовательские работы.
3. **Третий этап (2025 г.)** – проанализированы и обобщены результаты исследования, проверены положения и сформулированы выводы.

Теоретическая значимость исследования. Теоретически обоснована эффективность предлагаемых педагогических подходов, направленных на повышение учебной успеваемости младшего школьника. Проанализированы и обоснованы результаты исследовательской работы. Систематизированы и разработаны теоретические основы, относящиеся к данной проблеме.

Практическая значимость исследования. Теоретические и практические результаты исследования могут быть полезны для повышения учебной успеваемости младшего школьника. Представленные научно-исследовательские материалы в условиях новой системы оценивания являются востребованным инструментарием для специалистов, работающих над данной проблемой. Результаты применения разработанных путей педагогической поддержки и образовательных ресурсов в начальной школе могут способствовать преодолению проблемы младшего школьника с низкими результатами обучения.

Основные положения, выносимые на защиту.

– Изучение возрастных и индивидуальных особенностей младшего школьника способствует повышению эффективности педагогического процесса в начальнойшколе.

– Уровень разработки и применения путей педагогической поддержки младших школьников с низкими результатами обучения напрямую зависит от уровня изученности психолого-педагогических причин учебных трудностей и низких результатов обучения. Разработанные нами пути педагогической поддержки направлены на обеспечение ожидаемых конечных результатов обучения учащихся снизкими показателями.

– В эффективной организации процесса обучения и учения ключевое значение имеет разработка путей педагогической поддержки и классификация групп учащихся с низкими результатами обучения по уровню учебных трудностей.

– Выявленные в результате исследования основные причины учебных трудностей младших школьников с низкими результатами обучения, а также эффективные пути педагогической поддержки способствуют обеспечению положительного влияния внедрения образовательных ресурсов и улучшению учебных результатов.

Структураи объем диссертации. диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложений. Диссертация содержит 12 таблиц, 55 диаграмм и 10 графиков. Основной текст диссертации составляет 168 страницу, с приложениями — 290 страниц.

YERITSYAN GOHAR BERKA

WAYS OF PEDAGOGICAL SUPPORT PROVIDED BY PRIMARY SCHOOL CHILDREN WITH LOW ACADEMIC PERFORMANCE

Dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01"Theory and History of Pedagogy". The defense of the dissertation will take place on May 14, in 2026 at 12:00 meeting of the specialized council "Pedagogy" 020 of the HESC of RA at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: 0010, Yerevan, Tigran Mets str., 17.

SUMMARY

Relevance of the research. Considering the pace of improvement in pedagogical processes in general education schools in recent years, the issue of junior schoolchildren's low academic performance directly proves the relevance and urgency of the topic. These processes require reforms, especially in terms of identifying the reasons behind low academic results of junior schoolchildren and developing strategies to overcome them. It Is worth noting that the issue of low academic results in junior schoolchildren has scarcely been examined from a pedagogical perspective, especially in light of the new system of academic assessment. In fact, there are some existing problems and contradictions in this field that urgently need in-depth and multi-dimensional research and solutions. Over the years, the issue of low academic performance of junior schoolchildren has remained an important pedagogical issue that now urgently needs to be addressed. This issue is truly at the forefront of attention from both scholars and practicing educators.This issue has been discussed by scholars such as L.S. Vygotsky, A.A. Budarin, M.A. Danilov, A.M. Helmont, V.P. Yesipov, L.V. Zankov, V.V. Davydov, K.V. Bardin, P.P. Blonsky, L.I. Bozhovich, I.P. Podlaskin, V.I. Zikova, P.P. Borisov, N.I. Murachovski, L.S. Slavina, A.A. Smirnov, V.S. Tsetlin, M.S. Pevzner, and others.
A comprehensive and thorough study and analysis of these issues will contribute to the effectiveness of the pedagogical process in elementary schools, taking into account the new evaluation system approaches. On this basis, pedagogical support methods will be developed for junior schoolchildren with low academic results. Relevance in the Context of Modern Educational Reforms due to the introduction of the State Educational Standard for General Education in 2023, the assessment system for students' academic achievements has changed. In the new evaluation scale, each grade, even the minimum, is considered a student's academic achievement, and the primary goal is to secure and affirm the student's academic progress and outcomes. Thus, ensuring that students are constantly motivated to improve their academic progress has become an imperative. In this context, there arises the necessity of developing pedagogical support methods to ensure positive academic progress for junior schoolchildren. Hence, it is necessary to study and analyze the new rules of academic assessment, identify the educational needs of junior schoolchildren, analyze the psycho-pedagogical causes of low academic performance, and propose solutions for pedagogical support.

Research Purpose. To identify the psycho-pedagogical causes of low academic results of junior schoolchildren and to propose pedagogical support methods to ensure positiveprogress in this process.

Object of the research: The process of academic performance of a primary school student with low learning outcomes and the factors influencing it.

Subject of the research: The ways and methods for improving the academic performance of a primary school student with low learning outcomes.

Research Tasks.

1.To study the age-related and individual characteristics of junior schoolchildren to form positive motivation for their academic improvement;
2.To define the concept of "learning difficulty";
3.To present a description of each group of junior schoolchildren with low academic performance (based on low academic outcomes and learning difficulties);
4.To conduct a study to identify the causes of low academic results and learning difficulties, and to assess the effectiveness of educational resources implementation;
5.To propose pedagogical support methods for junior schoolchildren with low academic outcomes to ensure their academic improvement.

Main stages of the research. The research was carried out in three stages.

Stage 1. (preparatory stage, 2020–2022). At this stage, psychological-pedagogical, professional, and methodological literature related to the research problem was studied. The theoretical and methodological foundations of the research were determined, the main directions of the study were clarified, the object, subject, and purpose of the research were defined, the research hypothesis and objectives were formulated, and the research methodology was developed.

Stage 2. (2022–2024). During this stage, the approaches to studying the problem of low learning outcomes among primary school students were developed and theoretically systematized. Research activities were carried out.

Stage 3. (2025). At this stage, the research results were analyzed and generalized, the proposed assumptions were verified, and conclusions were formulated. The results were summarized in scientific publications.

Scientific Novelty of the Research. Study and analysis of the causes of low academic outcomes in junior schoolchildren in the context of the new system ofacademic assessment.

1.Development and application of pedagogical support methods for junior schoolchildren with low academic results, including school-family collaboration, extended-day schooling, differentiated teaching, and the introduction of educational resources with continuous monitoring.
2.Development of educational resources, including electronic "Talking Books" and workbooks with varied tasks and thematic materials.
3.Definition of the concept of "learning difficulty" as the discrepancy between the level of the student's competence and the subject-related standards.

Theoretical Significance of the Research. Theoretical substantiation of the effectiveness of the proposed pedagogical approaches for improving the academic

progress of junior schoolchildren. The research findings are analyzed and the scientific basis of the problem is developed. h

Practical Significance of the Research. Theoretical and practical results can be useful in improving the academic progress of junior schoolchildren. The proposed scientific materials, in the context of the new evaluation system, provide a necessary tool for specialists working on this issue. The developed methods of pedagogical support and the use of educational resources can help address the problem of low academic performance in elementary schools.

Structure and volume of the thesis. The thesis consists of an introduction, three chapters, conclusions, a list of references and appendices. The thesis contains 12 tables, 55 diagrams and 10 graphs. The main text of the thesis is 168 pages, with appendices - 290 pages.